«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Ամսաթիվ՝	**18.04.2026թ.**
Ֆուտբոլային ակումբ՝	**«Արարատ-Արմենիա Ֆուտբոլային Ակումբ» ԲԲԸ**
Առաջնություն՝	**ՊԼ (2025-2026)**
Խաղ՝	**«Վան» - «Արարատ-Արմենիա», 20.03.2026թ.**
Վարույթ՝	**ՊԼ-094**

Հարգելի՛ գործընկեր,

Կից ներկայացված է ՊԼ-094 վարույթի շուրջ ՀՖՖ Կարգապահական եւ էթիկայի կոմիտեի կողմից 2026 թվականի ապրիլի 17-ին տեղի ունեցած նիստի արդյունքում կայացված որոշումը։

Խնդրում ենք որոշումն ընդունել ի գիտություն եւ ապահովել վերջինիս կատարումը՝ ՀՖՖ Կարգապահական եւ էթիկայի կանոնակարգով (2025թ. խմբագրություն) սահմանված կարգով։

Հարգանքով՝

ՀՖՖ Կարգապահական գրասենյակ

Գրասենյակի ղեկավար՝ Գայանե Զաքարյան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵ

Հասցեատեր՝

«Արարատ-Արմենիա Ֆուտբոլային Ակումբ» ԲԲԸ

Էլեկտրոնային փոստի հասցե՝ info@fcararatarmenia.am

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական եւ էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17.04.2026թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Նարեկ Ադամյան
	Արփի Լազարյան

Վարույթ՝	ՊԼ-094
Խախտում՝	1)Ակումբի պաշտոնյա Աշոտ Բեգլարյանի կողմից խաղը սպասարկող անձի հասցեին վիրավորական արտահայտություններ և հայհոյանք հնչեցնելը / Հավելված 1 Ա, 32-րդ կետ 2)Ակումբի պաշտոնյա Աշոտ Բեգլարյանի կողմից՝ մարզադաշտում անկարգություններ առաջացնող գործողություններ իրականացնելը / Հավելված 1 Ա, 16-րդ կետ
Առաջնություն՝	ՊԼ (2025-2026)
Խաղ՝	«Վան» - «Արարատ-Արմենիա », 20.03.2026թ.

ՀՖՖ Կարգապահական եւ էթիկայի կոմիտեն որոշեց՝

Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2025 թվականի խմբագրություն) 22-րդ հոդվածի 3-րդ կետը՝ համակցել սույն վարույթի առաջին և երկրորդ կետերով սահմանված կարգապահական խախտումների համար սահմանված պատասխանատվության միջոցները և «Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ պաշտոնատար անձ Աշոտ Բեգլարյանին արգելել ՀՖՖ հովանու ներքո անցկացվող Fastex Պրեմիեր լիգայի և Հայաստանի Գավաթի խաղարկության հանդիպումների ընթացքում, ընդհանուր 5 (հինգ) խաղով, գտնվել պատվավոր հյուրերի (VIP) համար նախատեսված գոտում: «Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200,000 ՀՀ դրամի չափով:

ՀՖՖ Կարգապահական եւ էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

Ծանուցում

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (disciplinary@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 50,000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց: Նշված վճարը վերադարձման ենթակա չէ:
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը: Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության:
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից: